

## 5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

### 5.7. Կենդանաբանական այգու գործունեությունը 2003 թվականին

ՀՀ-ում գործող միակ պետական կենդանաբանական այգուն 2003թ. տարեվերջի դրությամբ առկա է եղել 205 տեսակի կենդանի և թռչուն (0.5%-ով ավել, քան 2002թ. տարեվերջին): Կենդանիների և թռչունների գլխաքանակը կազմել է 2316 (2002թ` . 2272):

#### Կենդանիների քանակը տարեվերջին

	Տեսակների քանակը				Գլխաքանակը			
	2000	2001	2002	2003	2000	2001	2002	2003
Երկկենցաղ	1	2	35	3	1	2	54	5
Սողուններ	18	19	2	34	148	152	2	53
Կաթնասուններ	54	56	51	52	154	170	135	145
դրանցից՝ գիշատիչներ	28	29	25	25	60	65	49	55
սմբակավորներ	26	27	26	27	94	105	86	90
Չկներ	17	17	23	24	201	228	236	248
Թռչուններ	68	70	68	64	508	620	608	614
դրանցից՝ գիշատիչներ	13	15	15	15	62	68	72	66
Այլ	35	35	25	28	1914	1872	1237	1251
Ընդամենը	193	199	204	205	2926	3044	2272	2316

Կենդանաբանական այգուն բնակվող 33 տեսակի 107 կենդանի և թռչուն գրանցված են միջազգային «Կարմիր գրքում», իսկ 49 տեսակի 130 կենդանի ու թռչուն՝ Հայաստանի «Կարմիր գրքում»: Միջազգային «Կարմիր գրքում» ընդգրկված՝ կենդանաբանական այգուն բնակվող կենդանիների տեսակների քանակի գերակշռող մասը բաժին է ընկել կաթնասուններին՝ 58.8%, իսկ Հայաստանի «Կարմիր գրքում»՝ սողուններին, 46.9%:

#### Կենդանաբանական այգու կենդանիների քանակական շարժը

	Վերաբնակեցված (այլ ճանապարհով ձեռք բերված) զնված				Վաճառված		Ծնված		Կենդանիների անկում	
	տեսակների քանակը	գլխաքանակը	տեսակների քանակը	գլխաքանակը	տեսակների քանակը	գլխաքանակը	տեսակների քանակը	գլխաքանակը	տեսակների քանակը	գլխաքանակը
Սողուններ	-	-	-	-	-	-	3	6	6	7
Կաթնասուններ	6	12	-	-	6	13	10	23	6	6
դրանցից՝ գիշատիչներ	6	12	-	-	1	2	3	4	3	3
սմբակավորներ	-	-	-	-	5	11	7	19	3	3
Թռչուններ	-	-	16	129	9	77	14	188	7	13
Այլ	-	-	-	-	2	63	5	470	-	-
Ընդամենը	6	12	16	129	17	153	32	687	19	26

Կենդանաբանական այգու ընդհանուր մակերեսը կազմել է 8.5 հա, իսկ կենդանիների համար նախատեսված կառույցների մակերեսը՝ 5.2 հա, որն ընդհանուր մակերեսի 61.2%-ն է: Կենդանիների համար նախատեսված ձմեռային կառույցների մակերեսը կազմել է 2.0 հա, որը կենդանիների համար նախատեսված կառույցների ընդհանուր մակերեսի 38.5%-ն է և այգու

**5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

ընդհանուր մակերեսի 23.5%-ը: Մեկ կենդանուն բաժին է ընկել 22.4 քառ.մ կառույց՝ 2002թ. 22.9 քառ. մ-ի դիմաց: Այգու ընդհանուր տարածքի մեկ հա-ին բաժին է ընկել 272 կենդանի և թռչուն (2002թ.՝ 267): Աշխատողների ընդհանուր թվաքանակը կազմել է 92 մարդ, բոլորն էլ՝ հիմնական:

2003թ. կենդանաբանական այգի այցելած հաճախորդների թվաքանակը 2002թ. համեմատ 10%-ով ավելացել է և կազմել 110.0 հազ. (2002թ.՝ 100.0 հազ.): Հանրապետության 1000 բնակչի հաշվով այցելությունը կազմել է 34.3:

2003թ. կենդանաբանական այգում կազմակերպվել է 2450 էքսկուրսիա, որի 31.0%-ը՝ դպրոցականների համար: էքսկուրսիաներին մասնակցել է 70.0 հազ. այցելու, նրանց 64.3%-ը՝ դպրոցականներ (2002թ.՝ 80.0 հազ. այցելու և 65.0%): 7150 այցելուների համար կազմակերպվել է 280 դասախոսություն (2002թ.՝ 6100 այցելու և 320 դասախոսություն):

2003թ. կենդանաբանական այգու ֆինանսական մուտքերը կազմել են 86.8 մլն. դրամ (2002թ. համեմատ դրամք աճել են 0.5%-ով), որից 67.8 մլն. դրամը՝ պետական բյուջեից (2002թ.՝ 70.6 մլն. դրամ), 10.1 մլն. դրամը՝ մուտքի վճարումներից (2002թ.՝ 9.0 մլն. դրամ) և 8.9 մլն. դրամը՝ նվիրատվություններից (2002թ.՝ 6.8 մլն. դրամ): Մուտքի վճարը մեկ այցելուի հաշվով կազմել է միջինը 251.5 դրամ, 2002թ. 450 դրամի դիմաց:

**Ֆինանսական միջոցների օգտագործումը 2003թ.**

	Ընդամենը, մլն. դրամ	Աճը կամ նվազումը 2002թ. համեմատ (նվազումը «-» նշանով), %
Նյութական ծախսեր	53.2	9.2
Ոչ նյութական ծառայությունների վճարումներ	3.3	- 29.8
Գործուղման ծախսեր	0.5	- 50.0
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	18.6	5.1
Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարներ	5.3	0
Կապիտալ ներդրումներ, հիմնավերանորոգման, գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր	5.9	- 50.8
Ընդամենը	86.8	0.6

**ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ**

**Ս.Մնացականյան**